Ալեքսանդր Շիրվանզադե

Արսեն Դիմաքսյան

Երկրորդ մաս, VIII - XII

VIII

Նա մնաց միայնակ ուսուցչական սենյակում, միայնակ յուր բոլոր սկզբունքների և համոզմունքների հետ: Կրկին զգաց, որքան դժվար է մարդկանց հավատ ընծայելը: Ուրեմն ոչ ոք ձայն չբարձրացրեց անարդար ոտնձգության դեմ, ոչ ոք չպաշտպանեց և չպիտի պաշտպանի նրան: Կնշանակե՝ նրա կողմնակիցները հասկացել են հակառակ կուսակցության ուժը:

«Վախ, վա՜խ, միշտ մի կտոր հացի համար վախ, ահա այն հրեշը, որ ջլատում է մարդկանց բարոյական ուժը»:

Նա ձեռը ուժգին զարկեց սեղանին, ոտքի կանգնեց: Երբ հետ նայեց, տեսավ մենակ չէ: Սենյակի ծայրում կանգնած էր Ինյաթյանը և, ձեռները մեջքին դրած, անհոգ կերպով նայում էր պատին:

Մեծ մարդ է եղել հանգուցյալը, ասաց նա, ցույց տալով Ներսես Աշտարակցու պատկերը:

Այո՛, մեծ մարդ է եղել, պարոն Ինյաթյան:

Ասում են, երբեք չէր հուսահատվում խոչընդոտների հանդիպելիս: Հենց այդ բանն է մարդկանց մեծացնում: Հուսահատությունը թուլասիրտներին է միայն հատուկ: Հա, ի՞նչ էի ուզում ասել, այս երեկո երևի, ուսուցչական ժողովը չի կայանալ:

Ինչո՞ւ:

Որովհեան բոլոր ավագ ուսուցիչները հրավիրված են հոգաբարձու պարոն Վեքիլյանի մոտ:

Հրավիրվա՞ծ:

Միթե դուք չգիտեի՞ք, ձեզ չի՞ հրավիրել: Զարմանալի է: Խնջույքի նման մի բան է սարքել: Ասում են նպատակ ունե պարոն Վեքիլյանը, այսինքն ուզում է ուսուցիչների հետ բարոյական կապ հաստատել: Ուրեմն ժողովը կհետաձգեք, չէ՞:

Եթե Վեքիլյանի խնջույքը ավելի հետաքրքրական է ձեզ համար, ժողովը պետք է հետաձգել:

Ինյաթյանը, քթի տակ երգելով, դուրս գնաց: Այդ օրը Դիմաքսյանը ախորժակ անգամ չունեցավ ճաշելու, այնքան վրդովված էր: Սիրականն այնպես սովորել էր նրա բնավորությանը, որ իսկույն հասկացավ, թե նա վատ է տրամադրված: Նա հոգում էր Դիմաքսյանի մասին ինչպես սիրող, զգայուն եղբայր: Նա պատրաստ էր ամեն րոպե մահու և կյանքի կռվի մեջ մտնել նրա համար, եթե միայն այդ հարկավոր լիներ: Եվ Դիմաքսյանը լիովին հավատում էր նրա անկեղծ հավատարմությանը: Ուրախալի էր նրա համար անկիրթ ժողովրդի այդ հարազատ զավակի մեջ տեսնել այդքան սեր:

Իրիկնադեմին նա գնաց Մսերյանի մոտ, ուր միշտ գնում էր, երբ հուզված էր լինում:

Իդեալիստը այս անգամ՝ անսովոր աշխույժ ստացած՝ անցուդարձ էր անում սենյակում, ինքն յուր հետ ձեռներով խոսելով: Բանն այն է, որ նա այդ օրը պաշտոն է ստացել մի արքունական հիմնարկության մեջ և վաղվանից պետք է

սկսեր ծառայել: Նույն րոպեին նա մտքում հաշվում էր արդյոք պաշտոնը նրա ամբո՞ղջ ժամանակը պետք է խլե, թե՞ կարդալու համար ազատ ժամեր կթողնի:

Դիմաքսյանը շնորհավորեց նրան:

Բայց դու ինչո՞ւ տխուր ես, գոչեց Մսերյանը, էլի ո՞վ է էշիդ կաղ ասել:

Դիմաքսյանը պատմեց օրվա եղելությունը: Մսերյանը, ինչ ասել կուզե, վրդովվեց: Ի՞նչպես, Բարաթյանը կրոնի և եկեղեցու պաշտպան է դարձել: Ուրեմն նա ուզում է ծախել այն, ինչ որ չունե: Դա բարոյական գողություն է:

Եվ նա խոսում էր համոզվա՞ծ, ինչպես ճշմարիտ քրիստոնյա՞:

Դիմաքսյանը հեգնաբար ժպտաց: Մի՞թե կարող է համոզմունք լինել մի բան, որ մարդու հոգուց չի բխում: Դա մի վտանգավոր զենք է նրա դեմ, ուրիշ ոչինչ: Օ՛օ, Բարաթյանը խելոք է, շատ լավ է ճանաչում հասարակության թույլ երակը: Նա ուզում է Դիմաքսյանի վարկը կոտրել, նրա հեղինակությունը ոտնատակ անել, ահա նրա նպատակը:

Ներողությո՛ւն, ընդհատեց Մսերյանը ընկերոջ խոսքը, նա ի՛նչպես կարող է քո հեղինակությունը ոտնատակ անել:

Հրատարակելով ինձ անկրոն: Դա, իհարկե, նրան կհաջողվի, մարդկանց փոփոխամտության շնորհիվ: Երևակայիր, ամբողջ մեր ուսուցչական խմբի մեջ այսօր մեկը չգտնվեց, որ ինձ հետ բողոքեր: Ես մնացի մենակ, հասկանո՞ւմ ես, մենակ:

Եվ նա ավելացրեց, որ այսուհետև ամենքը իրանից պիտի երես դարձնեն: Նա հաղորդեց Վեքիլյանի հացկերույթի մասին: Նա հասկանում է, ինչ ասել է բարոյական կապ. Վեքիլյանը կամենում է նրա դեմ զինել ուսուցիչներին:

Մսերյանը գլուխը շարժեց:

Ինչո՞ւ ես ժպտում, միթե դու իմ տեղը լինեիր, չէի՞ր հուսահատվիլ:

Ե՞ս, ո՛չ:

Ո՞չ:

Չէի հուսահատվիլ: Նախ և առաջ ես քո տեղը երբեք չեմ կարող լինել: Ով ինձ նման քամի կուլ տվողին սեմինարիայի ինսպեկտորի պաշտոն կտար: Երկրորդ, եթե ես քո տեղը լինեի, իսկույն գդակս կվերցնեի, կասեի՝ մնաք բարով, հորս ցավը ձեզ էլ ու ձեր դպրոցին էլ:

Այդ կնշանակե չհուսահատվե՞լ: Բայց ես գոնե այդպես չեմ անում, ես միայն վրդովվում եմ:

Դու այդ էլ չպիտի անես:

Դիմաքսյանը զարմացած նայեց ընկերոջ երեսին: Նա բոլորովին ոչինչ չէր հասկանում նրա հակասական խոսքերից: Մի րոպեաչափ նրանք լուռ էին:

Մսերյանը, նայելով յուր ծխախոտի ծայրին, ինքն յուր հետ խորհրդածության մեջ էր: Պարզ էր, որ նա մի բան ուզում էր ասել, բայց չգիտեր, ո՛ր կողմից սկսել:

Վերջապես, նա ձեռքը խփելով Դիմաքսյանի ծնկին, ասաց.

Գիտե՞ս ինչ, Արսեն, ես քանի անգամ ասել եմ, որ դու ինձ երբեք օրինակ չվերցնես քեզ համար: Դու ուրիշ մարդ ես, իսկ ես ուրիշ: Մենք հակատիպարներ ենք:

Ճիշտ է, նա գդակ կվերցներ ու դպրոցից դուրս կգար, բայց երբեք չէր կամենալ, որ յուր ընկերն էլ այդպես անի: Չէր կամենալ, մինչև անգամ, որ նա հուսահատվի մազաչափ: Վաղուց, շատ վաղուց նրա գլխում կազմվել էր հասարակական գործիչի լիակատար իդեալը: Ո՛վ գիտե, որքան նա բախտավոր մարդ կհամարեր իրան, եթե կարողանար տասներորդի չափ լինել այն, ինչ որ նրա կարծիքով պետք է լինի հասարակական գործիչը: Բայց նա զգում էր, որ չի կարող և հենց ավելի ցավալին էր այդ, որ զգում էր:

Իսկ դո՛ւ կարող ես լինել, շարունակեց նա ոգևորված, եթե միայն աշխատես: Բայց դու, Արսեն, դեռ, ներիր, որ պարզն եմ ասում, դեռ շատ անեփ ես, անեփ, թե՛ ինչպես ընկերական մարդ և թե՛ ինչպես գործի մարդ: Քանի-քանի անգամ ես տեսել եմ, որ ամեն մի չնչին բան քեզ հուսահատեցնում է կամ խրախուսում, ոգևորում: Երբեք ես չեմ մոռանալ այն օրը, երբ մի ինչ-որ լրագրի հոդվածից, մի վայրիվերո գրվածքից քիչ էր մնում խելագարվեիր: Կարծես, չգիտեիր, որ այդ թուղթ մրոտողների հարյուրից ինսունինը չարժեն ընկույզի կճեպին: Չեմ մոռանալ և՛ այն օրը, երբ դու ոգևորված և հիացած պատմում էիր, թե ինչպես քեզ ընդունել են քո հայրենի քաղաքում:

Եվ մի քանի վայրկյան լռելուց հետո, իդեալիստը շարունակեց, ձայնի տոնը փոխելով և ավելի սառն կերպով: Նա ասաց, թե բուն հասարակական գործիչը այդպես չի լինում. նա հեռու է սնափառության վտանգավոր ախտից: Նրա համար նշանակություն չունեն ո՛չ ծափահարությունները և ո՛չ հալածանքները: Նա ոչ ոքից չի սպասում ո՛չ վարձատրություն, ո՛չ երկրպագություն: Նա յուր վարձը և խրախույսը պտրում է յուր անձնավորության մեջ և այնտեղ է գտնում: Նրա բարոյական սնունդը, նրա հոգեկան քաջության միակ աղբյուրը յուր սիրտն է, յուր ներքին աշխարհը: Այնտեղ է նա որոնում գովասանքն էլ, պարսավանքն էլ: Այնտեղ է նա զգում և՛ ծափահարության ձայնը, և՛ անաչառ, խիստ քննության հարվածները: Դրսի աշխարհը այս դեպքում նրա համար գոյություն չունե:

Նա դարձյալ լռեց, նայեց ընկերոջ երեսին և ապա ավելացրեց. Ասա, այսպե՞ս է, թե՞ չէ, հերքի՛ր, եթե սխալվում եմ:

Բայց Դիմաքսյանը լուռ էր և ուշադիր լսում էր ընկերոջը: Նա համաձայն էր նրա ասածների հետ. նա ինքը վաղուց այդ բանը գիտեր: Բայց լսել մի ուրիշից այդպես բացարձակ, անկեղծ և խիստ կերպով ծանր էր նրա համար, այդ ուրիշը լիներ նրա ամենամտերիմ ընկերը:

Նա վախենում էր նայել Մսերյանի երեսին, որ այդ րոպեին այնքան խիստ, երկյուղալի, բայց և հարգելի էր նրա համար: Նա զգում էր յուր դեմ նստած մի անողոք բուժիչ: Սուր դանակը ձեռին, սառնությամբ այդ բժիշկը օպերացիայի էր ենթարկում նրա հոգու ամենաթույլ, ամենահիվանդոտ մասերը: Բայց նա գիտեր, որ այդ խստությունը առաջանում է միմիայն հիվանդին բուժելու անկեղծ և ջերմ

ցանկությունից: Նա դողում էր, հուզվում, բարկանում, բայց և չէր ընդդիմանում այդ անողոք վերլուծությանը:

Գունատ դեմքով, աչքերը խոնարհեցրած, շնչասպառ և դժվարությամբ արտասանեց.

Շարունակի՛ր:

Մսերյանը ասաց, թե յուր ասելիքը վերջացել է: Նա ավելացրեց միայն, թե յուր շրջանին, հասարակությանը, վերջապես մարդկությանը ծառայող ամեն մի փոքր թե մեծ մարդ ունե մի որոշ իդեալ: Նա մաղթեց, որ Արսենի բարձրագույն իդեալը լինի Նա, որին ոչ մի իդեալ չէ կարող հասնել: Նրան չծափահարեցին, այլ հալածեցին, որովհետև օտարոտի գաղափարներ էր քարոզում: Բայց Նա չէր հուսահատվում, այլ գործում էր մարդկային տգիտության դեմ: Նա ցավ չէր զգում մինչև անգամ այն ժամանակ, երբ բևեռված էր:

Որովհետև Նա յուր սրտի խորքում, գիտե՞ս, այստե՛ղ, ուներ անսահման սփոփանքի և բերկրության աղբյուր: Դա աստվածային լույսն էր: Այո՛, նա է բուն մարդը, ով այդ լուսո գոնե մի նշույլն ունե յուր մեջ: Առանց նրան չկա ճշմարիտ մարդ, չկա մանավանդ ուրիշներին օգտավետ լինել կամեցող մի անհատ:

Նա վերջացրեց խոսքը և սկսեց անցուդարձ անել սենյակում: Արդեն օրը բավական մթնել էր: Նա պարզ չէր տեսնում Դիմաքսյանի դեմքը, և եթե տեսներ, պետք է այնտեղ կարդար յուր խոսքերի խոր ազդեցությունը:

Իհարկե, դու ինձ կարող ես ֆրազյոր համարել: Բայց այդ ինձ համար միևնույնն է, միայն թող իմ կարծիքը քեզ չվիրավորի: Դու շատ լավ գիտես, որ մի ուրիշի հետ այսպես պարզ չէի խոսիլ: Բայց քեզ սիրում եմ և հարգում:

Շնորհակալ եմ, մրմնջաց Դիմաքսյանը խուլ ձայնով, շնորհակալ եմ:

Եվ մի քանի վայրկյան լռելուց հետո, հառաչելով ավելացրեց.

Այո՛, ես անեփ եմ, ես շատ թերություններ ունեմ:

IX

Գայանեի թախիծը քանի գնում, այնքան սաստկանում էր: Դեռ առաջին մի քանի ամիսները նորածինը գրավել էր նրա միտքը: Չար կասկածը տեղի էր տվել մայրական անդրանիկ սիրո զգացմանը: Բայց անցան այդ ամիսները, և նա դարձյալ ենթարկվեց մի անգամ արդեն յուր սրտի մեջ արմատ ձգած տանջանքին:

Շատ անգամ ամուսինների մեջ տեղի էին ունենում ընտանեկան անախորժ տեսարաններ: Մարդը, հարկավ, աշխատում էր փարատել կնոջ կասկածը, բայց իզուր: Եթե ամենքը հավատացնեին, դարձյալ Գայանեն չէր համոզվիլ, թե միմիայն ինքն է սիրելի յուր ամուսնու համար և թե Իսակը ուրիշ ոչ ոքի վրա աչք չունե: Գալով փաղաքշանքներին, այստեղ էլ Գայանեն զգում էր մի կեղծիք, մի նուրբ փարիսեցիություն: Մի բան, որ տեսնում էր յուր ամուսնու հասարակական կյանքի մեջ էլ: Ո՞ւր է այն հոգեկան զորությունը, որ սպասում էր նա, թե մի օր պետք է երևան գա: Ո՞ւր են այն բարոյական անխախտ սկզբունքները, որ տղամարդին աստվածացնում են կինարմատի աչքում, իսկ կնոջ սիրտը լցնում հպարտ պարծանքով յուր մարդու վերաբերմամբ: Ինչո՞ւ նրա և Դիմաքսյանի մեջ ծագեցին այդ երկպառակությունները: Չէ՞ որ նրանք գաղափարակից ընկերներ էին, կնշանակե երկուսից մեկը փոխեց յուր հայացքները: «Ո՞րը փոխեց», հարցնում էր ինքն իրան Գայանեն, և մի ներքին ձայն նրան պատասխանում էր, թե ոչ Դիմաքսյանը:

Եվ որքան Բարաթյանը արհամարհանք ցույց տար դեպի այդ մարդը, սակայն նուրբ բնազդումով Գայանեն զգում էր, թե Դիմաքսյանն է գաղափարի մարդ, նա՛ է որոշ և անխախտ համոզմունքների տեր: Նրան թվում էր, որ հաճախ յուր ամուսինը այդ մարդու դեմ խոսում է նախանձից դրդված:

Մի անգամ Գայանեն, չկարողանալով իրան զսպել, մի այդպիսի ակնարկություն արեց:

Բարաթյանը բարձրաձայն ծիծաղեց և երեսը հետ դարձրեց: Բայց արդեն նկատելի էր, որ նրա ծիծաղը և արհամարհանքը դեպի Դիմաքսյանը արվեստական են դառնում և կնոջ պաշտպանությունը վրդովվեցնում է նրան:

Իսկ Գայանեն նայեց հետևից նրա առողջ պարանոցին և մի տեսակ ատելություն զգաց: Մի տարօրինակ, անբացատրելի ատելություն, որ առաջին անգամն էր զգում:

Մի ուրիշ անգամ Գայանեն բացարձակ հայտնեց յուր ամուսնուն բոլոր այն հույսերը, որ դրել էր նրա վրա: Նա ուրիշ բան էր սպասում Բարաթյանից: Նա կարծում էր, թե ահա գտել է, վերջապես այն մարդուն, որ կարող է իրագործել նրա իդեալը տղամարդի մասին:

Ես շատ բան էի պահանջում տղամարդից, ով գիտե, գուցե անիրագործելի բաներ: Բայց չէ՞ որ դու էլ այն ժամանակ գոնե բերանացի համաձայնվում էիր իմ պահանջների հետ: Կարելի է ես երեխա էի, անփորձ, միամիտ, աշխարհի վրա վարդագույն աչքերով էի նայում: Բայց այժմ ես չափավորել եմ իմ պահանջները և տեսնում եմ, որ էլի խաբված եմ, որ ամենաչնչին հույսս անգամ չի իրագործվում: Իսակ, այժմ ես քեզանից ոչինչ չեմ ուզում, ոչինչ, բացի մի բանից, այն է, որ դու այս չար կասկածը հանես իմ սրտից...

Նրա աչքերի մեջ փայլեց ներքին հոգեկան դառնություն: Նա մի եռանդուն ճիգ արեց և զսպեց յուր արտասուքը:

Բարաթյանը մի վայրկյան նայեց նրա երեսին և մի ինչ-որ միտք անմիջապես թելադրեց նրան փոխվել: Նրա դեմքից չքացավ կծու հեգնության ժպիտը, տեղի տալով մեղմ և փաղաքշական արտահայտությանը: Նա հանդարտ մոտեցավ Գայանեին, բռնեց նրա ձեռը և նայելով նրա աչքերին, հարցրեց.

Ո՞ւմ դեմ է քո կասկածը:

Օ՛օ, մի՛ հարցնիլ ինձանից, մի՛ հարցնիլ, չեմ կարող ասել...

Գայանե, դու իրավունք չունես, գիտե՞ս իրավունք չունես ինձ սրբապիղծ մարդ համարելու:

Այս խոսքերը նա մի այնպիսի եղանակով արտասանեց, որ մի վայրկյան Գայանեի սիրտը, կարծես, թեթևություն զգաց: Նա թույլ տվեց ամուսնուն իրան համբուրել: Բայց անցավ այդ վայրկյանը, երբ նա նայեց մարդու աչքերին:

Այնտեղ, այն քնքուշ և մեղմ արտահայտության տակ, Գայանեն տեսավ մի ավելի կեղծ բան, որ միայն նրա համար էր նշմարելի:

Նա կամացուկ յուր ձեռը ազատեց մարդու ձեռներից և մի քայլ հետ կանգնեց:

Բարաթյանը հասկացավ այդ շարժման իմաստը և երեսը հետ դարձրեց: Նա գիտեր, որ դժվար, մինչև անգամ անհնարին է փարատել երիտասարդ կնոջ զգայուն սրտի մեջ բույն դրած կասկածը: Ուստի բարվոք համարեց խոսակցությունը չերկարացնել:

Բայց արդեն ժամանակ է ճաշելու, սիրելիս, ասաց նա զվարթ եղանակով, որքան էլ բանաստեղծական լինենք, ստամոքսը յուր ուզածն է պահանջում:

Եվ շվացնելով անցավ սեղանատուն:

Նույն օրերը կանանց ընկերության օգտին ժողովարանի դահլիճում երեկույթ էր նշանակված: Գայանեն վճռել էր չգնալ, թայց ամուսինը սաստիկ թախանձեց նրան, որ համառություն չանի: Անկարելի է, վերջապես, բոլորովին երես դարձնել հասարակությունից: Ի՞նչ կմտածեն մարդիկ, միշտ նրան առանց կնոջ տեսնելով հանդեսներում: Ընտանեկան խռովություններ կարելի է ունենալ, բայց միշտ ուրիշների աչքից պետք է քողարկած պահել: Թող ամենքը համոզված լինեն, որ նրանց մեջ տիրում է փոխադարձ սեր: Երեկույթը բաղկացած էր նվագահանդեսից և պարերից: Մի հնամաշ դերասանուհի երգում էր մի ինչ-որ դրամատիկական երգ: Գայանեն նստած էր յուր ամուսնու մոտ տխուր, լուռ և անտարբեր: Նրա դեմքի վրա չկար նախկին գրավիչ ժպիտների նշույլն անգամ: Այդ դեմքը բարկացնում էր ամուսնուն, և սա ստեպ-ստեպ շշնջում էր նրա ականջին, խնդրելով, որ գոնե ուրիշների առաջ ուրախ ձևանա:

«Ես ոչ կարող եմ կեղծել, և ոչ կամենում եմ», պատասխանում էր Գայանեն:

Նվագահանդեսը վերջացավ: Բարաթյանները դուրս եկան դահլիճից մի փոքր անցուդարձ անելու: Հասարակության խուռն բազմության մեջ Գայանեն նկատեց Դիմաքսյանին: Մի անկյունում կանգնած՝ նա խոսակցում էր մի ինչ-որ պարոնի հետ: Տեսնելով Գայանեին, սառն քաղաքավարությունով գլուխ տվեց և կամենում

էր երեսը կրկին դարձնել յուր խոսակցին, երբ տիկինը ձեռը մեկնեց նրան:

Դիմաքսյանը շփոթված սեղմեց այդ ձեռը, հարցնելով տիկնոջ առողջությունը:

Շնորհակալ եմ, պատասխանեց Գայանեն, բայց ինչո՞ւ դուք մեզանից բոլորովին երես դարձրիք. այդ լավ բան չէ...

Այս անկեղծ հանդիմանությունը կատաղի հակառակորդի կնոջ կողմից անսպասելի էր Դիմաքսյանի համար: Մինչ նա մտածում էր ինչ պատասխանել, չկարողանալով ակնարկել փոխադարձ սառնության բուն պատճառը, Գայանեն պարզությամբ ասաց, թե ինքը ամեն ինչ գիտե:

Ձեր կռիվը իմ ամուսնու հետ է, իսկ ես չեզոք մարդ եմ:

Նրա ձայնը այնքան մեղմ և անկեղծ էր, նրա հայացքը այնքան պարզ և բարեհամբույր էր, որ Դիմաքսյանը ակամա մոռացավ յուր ատելությունը: Այդ կապուտակ աչքերը զարթեցրին նրա մեջ անցյալի հիշատակները, և դարձյալ նրա սիրտը սկսեց բաբախել: Բայց ինչ՞ու հուզվել: Չէ՞ որ Գայանեն այժմ ուրիշին է պատկանում և այն էլ նրա հակառակորդին: Պետք է հաստատամիտ լինել, սառնություն ցույց տալ այդ կնոջ, որ այնպես արհամարհեց նրան:

Այսպես դատում էր Դիմաքսյանի խելքը: Այնինչ՝ նա չէր զգում, թե ինչպես անցավ կես ժամ, մի ժամ, և դեռ խոսում էր նրա հետ:

Գայանեն էր խոսակցությունը երկարացնողը: Եվ խոսում էր նա այնպիսի նյութերի մասին, որ ակամա շարժում էին Դիմաքսյանի հետաքրքրությունը: Միայն մի բանից էր խույս տալիս Դիմաքսյանը տիկնոջ ամուսնու հետ ունեցած ընդհարումներից: Անցյալի վերաբերյալ նա նույնն էր, ինչ որ առաջ շուտ ոգևորվող, պարզ, անշեղ և երբեմն խստադատ:

Նա մազու չափ չի փոխվել, նրա հայացքները նույնն են, կյանքը նրան չէ աղավաղել. այդ պարզ է Գայանեի համար:

Նրանք կանգնած էին դահլիճի դռներից ոչ հեռու, պատի տակ: Գայանեն երբեմն նայում էր պարողների կողմը: Նրա աչքերը ակամա որոնում էին ամուսնուն և

չէին գտնում: Նա մի քայլ առաջ գնաց և մոտեցավ պարողներին: Դիմաքսյանը հետևեց նրան: Վերջապես, ահա նա... Տիկին Բախտամյանի հետ թև թևի տված՝ դուրս է դալիս դահլիճից: Երևի շատ պարելուց հոգնել են, և տիկինը կամենում է սեղանատանը մի սառը բանով զովացնել յուր ծարավը:

Այստեղ սաստիկ տոթ է, անցնենք մյուս դահլիճը, ասաց Գայանեն, ներքին խռովությունից շրթունքները ատամների տակ սեղմելով:

Դիմաքսյանը հետևեց նրան ծանր քայլերով: Նա չտեսավ Բարաթյանին: Նա այլևս ոչինչ չէր տեսնում, չէր նկատում, չէր լսում, բացի Գայանեից և նրա մեղմ, հոգնած ձայնից: Ո՛րքան փոխվել էր երիտասարդ տիկինը նրա աչքում, ո՜րքան գունատ էր, նիհար, այո՛, մինչև անգամ տգեղացած: Միթե ընտանեկան հոգսե՞րն են այդպես ազդել նրա վրա...

Կար ժամանակ, երբ Գայանեն այդ մարդուց քաշվում էր, մինչև անգամ վախենում էր դեմառդեմ խոսել, և ինքն էլ չգիտեր ինչու: Այժմ չքացել էր այդ երկյուղը: Այժմ նա խոսում էր ազատ, համարձակ: Հաճելի էր նրա համար մտածել, թե մի ժամանակ այդ մարդը սիրել էր նրան և գուցե տանջվել: Այդ միտքը նրան չէր շփոթեցնում: Չէ՞ որ ամեն ինչ անցել է, այլևս չկա այդ սերը, ուրեմն նրանք կարող են լինել բարեկամներ: Իրավ, Գայանեի համար ցանկալի է բարեկամ ունենալ Դիմաքսյանին, այդ խելացի, ազնիվ, զարգացած, գաղափարական մարդուն:

Նայում էր դեպի սենյակի հեռավոր անկյունը: Հանկարծ նա գունատվեց: Նա արագությամբ վեր թռավ տեղից, ասելով.

Կարծեմ, ժամանակն է տուն գնալու:

Նրանք մտան պարերի դահլիճը: Դիմաքսյանի ոտները դողում էին ներքին հուզմունքից: Նա ուրախ էր, երջանիկ էր: Նա ամբողջ ժամ ու կես խոսել էր այն էակի հետ, որից նա իրան ատված և ծաղրված էր համարում:

Գայանեի հետևից նույն սենյակից դուրս եկավ նրա ամուսինը տիկին Բախտամյանի հետ: Նա տիկնոջ թևը բաց թողեց ճիշտ այն վայրկյանին միայն,

երբ Գայանեն Դիմաքսյանին «ցտեսություն» ասաց:

Առանց միմյանց մի խոսք ասելու, մի ակնարկով մարդ ու կին հասկացան իրարու սրտինը: Նրանք դուրս եկան ժողովարանից թև թևի տված այսպես կամեցավ Բարաթյանը:

Կառքը նրանց սլացնում էր Թիֆլիսի փողոցներով, երկուսն էլ լուռ էին: Գայանեն անընդհատ հառաչում էր, իսկ Իսակը անընդհատ շվացնում էր և ցածր երգում:

Երբ տուն հասան, Գայանեն խելագարի պես վազեց երեխայի սենյակը, հարձակվեց նրա վրա և սկսեց արագ-արագ ու ամուր համբուրել: Երեխան զարթնեց և լաց եղավ: Դայակը առավ նրան յուր գիրկը:

Սեղանատան ընթրիքը պատրաստ էր: Գայանեն հրաժարվեց ուտելուց, մնաց երեխայի սենյակում և այնտեղ էլ գիշերեց: Իսկ ամուսինը ընթրեց հանգիստ ու զվարթ, ինչպես միշտ, ծառայի հետ կատակներ անելով:

Մյուս առավոտ թեյ խմելիս նա ժպտալով դարձավ Գայանեին.

Հը՛մ, ինչպե՞ս ես երեկվանից դես: Շատ լավ:

Սրտիդ փափագը առի՞ր «նրանից»:

Իսկ դուք նույնպես ձեր սրտի փափագը առի՞ք «նրանից»:

«Մենք» «ձեր» ազգականուհու հետ էինք:

Ես էլ ձեր ընկերոջ հետ էի:

Նախկին ընկերոջ, այս մեկը երբե՛ք մի մոռանար:

Բավակա՛ն է, գոչեց Գայանեն վրդովված, երեկ, վերջապես, պարզվեց ձեր բարոյական պատկերը:

Ի՞նչ ես ուզում ասել:

Այն, որ... այն որ... ես դժբախտ եմ:

Եվ բուռն արցունքը, անզսպելի ուժով դուրս բխելով, ողողեց նրա այտերը:

Ինչո՞ւ ես լալիս, ասաց մարդը սառն կերպով, դու ինձ էիր փորձում, ես էլ քեզ փորձեցի:

Ե՞ս, փորձո՞ւմ էի ձեզ, արտասանեց Գայանեն խեղդված ձայնով, ո՛չ, ես այդ տեսակ խաղեր չգիտեմ, դա ստորություն է:

Նա վեր կացավ տեղից և դուրս գնաց:

Մարդը հետևեց կնոջը և տեսավ, որ նա, երեսը բարձի մեջ թաղած, ուժգին հեկեկում է...

X

Սկզբում Գայանեի անսպասելի բարեկամական վարմունքը Դիմաքսյանին պատճառեց անսովոր բերկրություն: Տուն վերադառնալով, նա անընդհատ շվացնում էր և քթի տակ երգում. մի բան, որ երբեք չէր արել և որ հետևյալ օրը կրկնելով, շատ ուրախացրեց և շատ զարմացրեց Սիրականին: Գայանեն նրան չի ատում, չի արհամարհում: Նա մինչև անգամ հանդիմանում է նրան, թե ինչո՛ւ այնպես երես է դարձրել նրանից:

Բայց անցավ առաջին տպավորությունը, և Դիմաքսյանի լուրջ միտքը շուտով մոռացավ տարօրինակ բերկրությունը: Դարձյալ մտատանջությունը տիրեց նրան, և այս անգամ ավելի ծանր մտատանջություն: «Ի՞նչ օգուտ. ի՞նչ օգուտ, գոչեց նա հանկարծ, բևեռվածի պես կանգ առնելով սենյակի մեջտեղում, չէ՞ որ այսուհետև ուշ է և շատ ուշ»:

Մի՞թե բախտը կարող է այլևս ժպտալ նրան, և ինչպե՞ս: Ո՛չ, նա չպիտի մոտենար Գայանեին, չպիտի խոսեր նրա հետ: Ի՞նչ ապացույց կա, որ այդ սիրուն տիկինը չի ուզում նրան ծաղրել յուր մտքում:

Նա մի բարկացկոտ շարժում գործեց, շտապով հագնվեց և գնաց դպրոց: Այստեղ երկպառակությունները օրեցօր սաստկանում էին: Արդեն բացարձակ խոսվում էր, թե առաջիկա տարի Ինյաթյանը տեսուչ պետք է նշանակվի:

Դիմաքսյանի դրությունը քանի գնում վատանում էր: Այժմ ամենքն էին նրա դեմ: Ամբողջ մեծ պասի ընթացքում Ինյաթյանը աշակերտներին, առանց տեսչի հրամանի, տանում էր եկեղեցի: Չարչարման շաբաթը նա ինքն էլ նրանց հետ հաղորդվեց, յուր դեմքի վրա պահելով խորին ջերմեռանդության արտահայտություն:

Նկատելի էր, որ հետզհետե աշխատում էին դպրոցից վանել այն բոլոր վերանորոգությունները, որ Դիմաքսյանը մտցրել էր այնտեղ: Եվ այդ բոլորը կատարվում էր հոգաբարձուների գիտությամբ: Դիմաքսյանը բարկանում էր, կատաղում, բողոքում: Նրա առջև դնում էին դպրոցի կանոնադրությունը և հոգաբարձության իրավունքները: Ցավալի և վշտալի էր նրա համար տեսնել, թե ինչպես նորից աշակերտները սկսում են թառամել, նորից անհետանում է նրանց դեմքերից զվարթությունը և տեղի տալիս ճնշող մելամաղձության: Եվ նա գիտեր, որ այդ բոլորի իսկական հեղինակները երկու մարդ են Բարաթյանը և Վեքիլյանը:

Չէր կարելի ասել, թե այդ մարդիկ բոլորը բացառապես Դիմաքսյանի ջգրու էին անում: Ո՛չ, մեծ մասամբ այդ բխում էր նրանց համոզմունքից: Աշակերտների մեջ հղացած հլությունը նրանք համարում էին համեստություն, երկյուղը հեզություն: Դա էր նրանց աչքում բարոյական դիսցիպլինան:

Այժմ դպրոցը դպրոցի է նման և ոչ թե նիհիլիստների ժողովարանի, կրկնում էր Վեքիլյանը, ձեռները հաճույքով շփելով միմյանց:

Այո՛, իհարկե, պատասխանում էր Բարաթյանը, եթե ոչ, առաջ ամեն մի գլուխ առանձին գաղափար ուներ: Ամեն մի աշակերտ արդեն խոսքը այսպես էր սկսում. «իմ կարծիքովս»... Աշակերտ և կարծի՞ք...

Հոգաբարձության ծայրահեղ կամայականության դեմ Դիմաքսյանը գրավոր բողոք ուղարկեց Սինոդին: Բայց անցել էր հինգ շաբաթ և դեռ պատասխան չէր

ստանում:

Եվ երբեք չես ստանա, ասաց մի օր բժիշկ Սալամբեկյանը:

Բժիշկը ասաց, թե բողոքը այժմ առաջնորդի գրասեղանի մեջ է: Դիմաքսյանը սխալվել էր, անմիջապես դիմելով Սինոդին, նա պետք է առաջնորդի միջոցով բողոքեր: Այժմ թող նա սպասի սրբազանի «վերաքննության»:

Քեզ ո՞վ ասաց այդ, հարցրեց Դիմաքսյանը:

Վեքիլյանը:

Բժիշկը պատմեց, թե նախընթաց օրը սաստիկ ընդհարում է ունեցել իրավաբանի հետ Դիմաքսյանի պատճառով: Վեքիլյանը աշխատելիս է եղել ապացուցել, որ տեսուչը յուր գաղափարներով դպրոցը տակնուվրա է արել: Սալամբեկյանը հաստատել է, թե Վեքիլյանը և Բարաթյանը իրանց գաղափարներով դպրոցը ուզում են բարոյական անկելանոց դարձնել: Վեճը հասել է ծայրահեղության, երկու ընկերներ միմյանց վիրավորական խոսքեր են ասել:

Ես սառնարյուն մարդ եմ, բայց այդ անխիղճը մի այնպիսի սատանայական ակնարկություն արեց, մի այնպիսի ածական տվեց քեզ, որ արյունս գլխիս խփեց, ես ուզում էի մինչև անգամ ապտակել նրան:

Խոսակցությունը տեղի ուներ Մսերյանի սենյակում: Իդեալիստը վրդովված ականջ էր դնում, սակայն խոսակցությանը չէր մասնակցում:

Այժմ ի՞նչ կհրամայես անել, դարձավ Դիմաքսյանը նրան:

Կհրամայեմ, որ մրցումդ շարունակես:

Առանց զենքի՞, միայնա՞կ: Քո զենքը թող լինի ճշմարտությունը, եթե համոզված ես, որ քո կողմն է:

Այդ կնշանակե երկաթե պատը եղունգներով փորել:

Փորի՛ր, բայց մի հրաժարվիլ գործից:

Ես չեմ հրաժարվիլ, բայց իրանք կհրաժարեցնեն:

Խելոք մարդիկ նրանց վարմունքը կհամարեն բռնություն:

Իսկ ես կասեմ, մեջ մտավ բժիշկ Սալամբեկյանը որ խելոք մարդիկ կծիծաղեն Արսենի վրա: Ասա՛ խնդրեմ, քո կարծիքով, ովքե՞ր են այդ խելոք ասածներդ: Չլինի՞ թե քեզ և ինձ ես համարում. երեսիդ խաչակնքիր ու մեղա ե՛կ: Այո՛, մեծապատիվ պարոն օպտիմիստ-իդեալիստ, խելոքը նա է, ով որ յուր բարեկամի ոտների տակ ձմերուկի կճեպ է դնում, որ նա մի լավ սարտոմորտալ անի: Այսպես է անում ընկերը ընկերոջը, իսկ թշնամիները, Ինյաթյանները և նրանց նմանները, գիտե՞ս ինչ են անում: Նրանք հասարակության մեջ տարածում են, թե Դիմաքսյանը կաշառված դավաճան է, հասկանո՞ւմ ես ինչի մասին է խոսքս...

Ինյաթյա՞նը, իմ մասի՞ն, գոչեց Դիմաքսյանը խեղդված ձայնով:

Բուռն կատաղությունը դուրս խլեց նրա կրծքից մի երկարատև դառն ծիծաղ: Ձեռը խփելով ճակատին, նա ուժասպառ նստեց աթոռի վրա, կրկնելով.

Ե՞ս դավաճան, ազգավաճա՞ռ...

Անցել էին մի քանի օրեր այդ խոսակցությունից: Դիմաքսյանը տանը նստած խորհում էր յուր անելիքի մասին: Տոն օր էր: Հանկարծ նա լուսամուտի առջև, պատշգամբի վրա, տեսավ մի խումբ աշակերտներ, որ, միմյանց ուսերի վրայով գլուխները բարձրացրած, նայում էին դեպի ներս: Նա դուրս եկավ և հարցրեց, ինչ են կամենում:

Բողոք ունենք, պարոն տեսուչ:

Մտե՛ք:

Միմյանց հետևից, ամաչելով ու քաշվելով, ներս մտան վեց պատանիներ տասնույոթից մինչև քսանուերկու տարեկան: Բոլորին էլ Դիմաքսյանը առանձին-առանձին ճանաչում Ինչ որ խոսում ենք՝ ասում են Ինյաթյանին, նա էլ հայտնում է հոգաբարձուներին: Մենք ի՞նչ ենք անում, մենք ոչինչ չենք անում:

Հետո աշակերտները միմյանց հետևից պատմեցին մի քանի վրդովեցուցիչ դեպքեր: Անցյալ օրը Սարաֆյանը գիշերօթիկների համար թութ էր գնել յուր փողով: Վերակացու Դիլբիլյանը տեսել էր թե չէ, առել էր թութը նրա ձեռից և ամանով թափել Սարաֆյանի գլխին: Այսօր էլ Ինյաթյանը աշակերտներին ասել է. «Լսել եմ, խոսք եք կապել վերակացուներին ծեծելու, խառնակիչների ազգանունները ծոցատետրումս նշանակել եմ, պետք է հոգաբարձությանը հայտնեմ, որ բոլորին վռնդի դպրոցից»:

Բայց ճշմարի՞տ է, կամեցե՞լ եք ծեծել:

Մտքներովս էլ չի անցել, պատասխանեց Մարաքյանը:

Այո՛, մտքներովս էլ չի անցել, կրկնեցին մյուսները:

Մենք միայն Զալբամյանի մասին ենք խոսել մեր մեջ: Պարոն տեսուչ, նա մաքուր մարդ չէ, անպիտան մարդ է, բայց ծեծելու մասին խոսք չի եղել:

Այո՛, Զալբամյանը անպիտան մարդ է:

Կեղտոտ է:

Անբարոյական է:

Լավ, բավական է, ընդհատեց Դիմաքսյանը մեղմ ձայնով, շատ ուրախ եմ, որ ծեծելու մասին չեք մտածել: Դա վայրենություն կլիներ, այդ տեսակ բաներ երբեք չանեք:

Բայց պատգամավորները գրգռված էին: Նրանք միաբերան պահանջեցին, որ Զալբամյանը հեռացվի դպրոցից. հակառակ դեպքում, ասացին, թե ստիպված կլինեն դիմել այդ վայրենի միջոցին:

Այո, կծեծենք նրան:

Անպատճառ կծեծենք:

Կջարդենք:

Եթե դուք թույլ կտաք: Այո՛, եթե դուք թույլ կտաք, պարո՛ն տեսուչ:

Մենք ձեզանից ենք միայն վախենում: Մենք միայն ձեզ ենք հարգում...

Մեկը, մի շիկահեր պատանի, մինչև անգամ բռունցքը սեղմելով, մի քանի քայլ առաջ դրեց այնպես, որ, կարծես, նույն վայրկյանին պատրաստ էր հարձակվել նույնիսկ Դիմաքսյանի վրա:

Այն էլ ասա, այն էլ ասա, շշնջացին մի քանիսը Մարաքյանի հետևից:

Առաջնորդ-պատգամավորը դարձյալ նայեց գդակին, շապիկի փեշերը ուղղեց և արտասանեց.

Պարոն տեսուչ, մի բան էլ կա:

Ի՞նչ է:

Ձեզ վրա էլ լրտես է նշանակված:

Ի՞նձ վրա, ո՞վ է նշանակել:

Չենք իմանում, միայն դուք ինչ որ աշակերտների մոտ խոսում եք, պատմում են պարոն Ինյաթյանին:

Դիմաքսյանը չկարողացավ յուր զայրույթը թաքցնել, բայց, միևնույն ժամանակ, չհարցրեց, թե ով է յուր վրա լրտես նշանակված: Առհասարակ նա չթողեց այդ մասին երկար խոսել:

Այժմ ինձանից ի՞նչ եք պահանջում, հարցրեց նա:

Խնդրում ենք, որ դուք մեզ պաշտպանեք: Մենք եթե մինչև օրս անկարգություն չենք արել, ձեզ հարգելուց չենք արել: Մենք գիտենք, որ դուք մեզ սիրում եք, թույլ տվեք, պարոն տեսուչ, մենք նրանց կխրատենք:

Այո՛, կխրատենք:

Զարդ ու...

Սո՛ւս, լռեցե՛ք: Ի՞նչ ասացի ձեզ. երբեք թույլ չեմ տալ ձեզ այդ տեսակ վայրենություն: Եթե ինձ մոտ խորհրդի եք եկել, շատ շնորհակալ եմ: Այո՛, ես ձեզ սիրում եմ, ուրեմն դուք էլ լսեցեք իմ խորհուրդը և կատարեցեք: Ահա ինչ. գնացեք, հանգիստ շարունակեցեք ձեր դասերը, քննությունները վերջացրեք: Արձակուրդներից հետո, ես հուսով եմ, ձեր դրությունը կփոխվի:

Նա կամենում էր առժամանակ խաղաղացնել բորբոքված սրտերը, բայց այդ շատ էլ դյուրին բան չէր: Պատանի պատգամավորները այնչափ գրգռված էին, որ տեսչի հանդարտ հորդորները նրանց ավելի վրդովեցնում էին: Վերջապես Դիմաքսյանը խոստացավ անպատճառ և շուտով միջամտել հոգաբարձության առաջ նրանց մասին, և պատանիները հրաժեշտ տվեցին, կրկնելով:

«Ձեր խաթրու կհամբերենք»:

XI

Մի քանի օր անցած դպրոցում լուր տարածվեց, թե տեսուչը աշակերտներին հորդորում է ապստամբվել: Պատմում էին, թե այս նպատակով նա յուր մոտ է կանչել մի խումբ չարամիտ առաջավորներ և ապստամբության հրահանգը տվել:

Ինյաթյանը պնդում էր, թե առաջին հարձակումը յուր վրա պետք է լինի, «վասն զի» Դիմաքսյանի գլխավոր հակառակորդն ինքն է: Նա ամեն ճիգ գործ է դրել այդ «խելացնորի անմիտ, վնասակար գաղափարների» առաջն առնելու: Նա կամեցել է դպրոցը «փրկել անկումից»: Շատ հասկանալի է, որ Դիմաքսյանը չպիտի մարսեր նրան: Բայց նա երկչոտ մարդ չէ, պատրաստ է «նահատակվել յուր համոզմունքների և նորագույն սերնդի փրկության» համար:

Վերակացու Զալբամյանը բակի մի անկյունում գտել էր մի կույտ քարեր: Նա երդվում էր, թե խառնակիչներն են վաղօրոք այդ քարերը պատրաստել ապստամբության համար: Հինգերորդ դասատան լրտես Մարբազյանը երաշխավոր էր Զալբամյանի ասածի ճշմարտությանը: Յուր կողմից նա հավատացնում էր, թե մի քանիսի մոտ մինչև անգամ ատրճանակ է նկատել:

Իսկապես նա վեցերորդ դասատան աշակերտ Աֆրիկյանի գրպանում մի բան նկատել էր, բայց հաստատ չգիտեր ատրճանա՞կ էր, թե՞ վարունգ, որ Աֆրիկյանը շատ էր սիրում և միշտ գաղտնի ուտում էր:

Հոգաբարձությունը անմիջապես խառն նիստ հրավիրեց ուսուցիչների հետ: Երեկո էր, ամենքը սպասում էին նախագահի գալստյանը: Դիմաքսյանին ներկայացած վեց պատգամավորներին փակել էին առանձին-առանձին սենյակներում: Նրանց պետք է հարցուփորձի ենթարկեին ջոկ-ջոկ, ուստի անջատել էին միմյանցից, որպեսզի խոսք մեկ անելու միջոց չունենան:

Գիշերօթիկներին վաղօրոք քշել էին ննջարանները, դռները փակել էին և պահապան դրել մի հաստաբազուկ մշեցու, որ չգիտեր, թե այդ ինչ իրարանցում է սկսվել: Հայրենիքի տխուր վիճակից վշտացած հայաստանցին այնքան ծարավ էր թշնամու արյունին, որ երևակայում էր, թե ամեն մի գիշերօթիկ մի եզիդ է: Եվ, կարծես, պատրաստ էր մահակը «զարնել» այն գլխին, որ կհանդգներ դռներից դուրս ցցվել:

Նիստին հրավիրվածները շփոթման մեջ էին: Շտապով անցնում էին մի սենյակից մյուս սենյակ, խորհրդավոր կերպով միմյանց ականջին շշնջալով ապստամբության մանրամասն պարագաներ:

Վեքիլյանը չափից դուրս վախեցած էր: Ինյաթյանը նրան հավատացրել էր, թե ապստամբության հրահանգի մեջ նրա անունը երկրորդ տեղն է բռնում: Նա հերթակալ էր: Իբրև թե «չարամիտները» պետք է սպասեին նրա գալստյանը և Ինյաթյանից հետո նրան հարվածեին:

Ի՜նչ հանդգնություն, ի՜նչ հանդգնություն, կրկնում էր նա անդադար, բայց ինչպե՞ս բաց արեցիք դավադրությունը, պատմեցե՛ք, պատմեցե՛ք:

Սակայն ոչ ոք հաստատ չգիտեր, թե «դավադրություն» եղե՞լ է, թե՞ չէ: Բանն այն էր իսկապես, որ նախընթաց օրը վերակացու Զալբամյանը Մարաքյանից հարցրել էր, արդյոք ինչո՞ւ երկու օր առաջ նա յուր ընկերների հետ ներկայացել էր տեսչին: Մարաքյանին այդ հարցը շփոթեցրել էր, որովհետև նա երևակայել չէր կարող, թե յուր պատգամավորությունը, բացի հինգ աշակերտներից, ուրիշ

մեկին հայտնի է: Զալբամյանը ստիպել էր նրան խոստովանվել, սպառնացել էր և վերջը, տեսնելով, որ ոչինչ չի ազդում, մի կեղտոտ հիշոց էր տվել Մարաքյանին: Տաքարյուն պատանին, չկարողանալով իրան զսպել, ապտակել էր կոպիտ վերակացվին, ավելացնելով.

«Ձեզ բոլորիդ էլ պետք է այսպես պատժենք»:

Զալբամյանը աղմուկ էր բարձրացրել և ամենքին համոզել, որ ահագին դավադրություն կա աշակերտների մեջ ուսուցիչների և հոգաբարձության դեմ:

Բարաթյանը շատ սառն էր պահում իրան: Նա ընդդեմ էր ամեն մի ծայրահեղ միջոցի: Նա ասում էր, թե «մտքերի խառնակության ժամանակ սառնասրտությունը ամենազորեղ զենքն է մարդու համար»: Նա պնդում էր, որ ամեն ինչ պետք է գաղտնի կերպով անել, գործը չպիտի հոչակել, եթե ոչ «դպրոցի ճակատագիրը կարող է վտանգի ենթարկվել»: Սակայն Վեքիլյանը, Ամբակում Աֆանասևիչը և ուրիշները համոզել էին նախագահին, որ տեսչին հրավիրե ժողովի նիստին, ամենքի առաջ հարցուփորձ անե ու հետո հաղիմանե:

«Ի՜նչ երևելի տեսարան, ի՜նչ էֆեկտ մտածում էր Վեքիլյանը տեսնել Դիմաքսյանին մեղադրյալի նստարանի վրա, ամոթահար և ճնշված յուր հանցանքի ծանրության տակ»:

Սկզբում Դիմաքսյանը զարմացած և շփոթված էր: Նա լսել էր անհեթեթ լուրը, բայց խառն ժողովի մասին տեղեկություն չուներ:

Նրան վերին աստիճանի քաղաքավարի կերպով հրավիրեցին նստել ընդհանուր սեղանի շուրջը, որ ծածկված էր կանաչ մահուդով: Բայց նա հասկացել էր բանի էությունը, գիտեր, որ ամենքը իրան մեղադրյալ են համարում: Նա մի կես-արհամարհական և կես-բարկացկոտ հայացք ձգեց հանդիսավոր ժողովի վրա, և մի աթոռ վերցնելով, նստեց ժողովից հեռու, պատի տակ:

Նախագահը յուր դեմքին տալով լուրջ, բայց ներողամիտ արտահայտություն, մի համառոտ ճառով բացատրեց ժողովի նպատակը:

Ոչ վասն պատժելո զմեղավորս, այլ վասն ամբառնալո զմեղս, ավարտեց նա յուր ատենաբանությունը:

Դիմաքսյանը լուռ լսում էր: Այժմ նա բոլորովին հանգիստ էր, այնպես, որպես երբեք չէր եղել այդ մարդկանց ներկայությամբ: Նրան չէր վրդովեցնում մեղադրյալի վիճակը, որի մեջ դրել էին նրան: Նա այդ բանի վրա մտքում ծիծաղում էր: Նրան զայրացնում էր այդ հասարակական ներկայացուցիչների վարմունքը, առհասարակ, որպես վարմունք:

Երբ նրան հարցրին արդյոք ճի՞շտ է, որ նա դրդել է աշակերտներին ապստամբվել գլուխը ցավակցաբար շարժելով, արտասանեց.

Եթե իմ պատասխանը ձեզ գոհացներ, անկասկած այս ժողովը տեղի չպիտի ունենար:

Մեկիկ-մեկիկ առաջ բերեք հանցավորներին, հրամայեց նախագահը:

Ջալբամյանը աներեույթացավ և մի րոպե չանցած ներս բերեց մի տասնութ տարեկան պատանի: Դա վեց պատգամավորներից մեկն էր:

Այդ դո՞ւ ես, Դարբինյան. ճանաչում եմ, որդյակ, պատմի՛ր հանցանքդ:

Տիրեց ընդհանուր լռություն: Երեսուն ու երեք հայացքներ միաժամանակ բևեռվեցին պատանիի վրա: Հանդիսավոր ժողովը նրան շփոթեցրեց: Նա գունատ էր, կարմրեց, դողաց և միայն կարողացավ արտասանել.

Ներեցե՛ք...

Կներենք, որդի, ասա մեղքդ, մի վախենար: Մենք քեզի չենք մեղադրիլ, դու տհաս ես, «զի ոչ գիտես զոր ինչ գործես»: Անշուշտ քեզի այլ հորդորողներ եղել են, հիշատակիր անունները, տեսնենք:

Ես չգիտեմ, ես չեմ խոսել, Մարաքյանը և Աբիկյանը գիտեն...

Երեք օր առաջ, այսինքն ամսույս վեցին, օրն հինգշաբթի, առավոտյան տասն ու մեկ ժամեն տասներկու ու կես ժամը ումի մոտ եղել եք:

Պարոն տեսչի մոտ:

Այսպես: Պարոն քարտուղար. «եղել ենք պարոն տեսուչի մոտ»:

Ինչո՞ւ համար եկել եք այնտեղ:

Բողոքելու:

Ումի՞ դեմ:

Վերակացուների: Այսպես: Պարոն քարտուղար. «բողոքելու վերակացուների դեմ»:

Վեքիլյանը ինչպես իրավաբան-փաստաբան հարկ համարեց նախագահի խոսքը ընդհատել: Նա մի քանի շեշտակի հարցեր տվեց մեղադրյալին: Պատանին այնքան շփոթվեց, որ ամեն քայլում ինքը իրան հակասում էր: Վերջապես, նա արտասվեց: Թևից բռնելով՝ նրան դուրս տարեցին:

Երկրորդ պատգամավորը եղելությունը պատմեց ավելի անխռով: Որքան նրան զանազան հարցերով նեղն էին գցում, միշտ կրկնում էր.

Պարոն տեսուչը մեզ խրատում էր հանգիստ մնալ:

Այդ միջոցին տեսուչը այնպես էր նստել, որ քննվողները չգիտեին անգամ, թե նա ներկա է:

Նույնը կրկնեցին երրորդ, չորրորդ և հինգերորդ աշակերտները:

Վերջապես, հերթը հասավ գլխավոր պատգամավորին: Մարաքյանը անվեհեր ներս եկավ, գլուխը բարձր պահած, հպարտ, ինչպես վայել էր օրվա հերոսին: Երևում էր, որ նա արդեն ամեն պատիժ աչքի առաջ էր առել: Ուստի իրան տված քննական հարցերին նա պատասխանում էր համարձակ, աներկյուղ և մինչև անգամ կոպիտ եղանակով: Երբ հարցրին տեսչի մասին, նա դրականապես

պատասխանեց.

Եթե պարոն տեսուչը չլիներ, մենք անպատճառ պետք է ապստամբվեինք:

Ժողովը շշնջեց: Վեքիլյանը փսփսաց Բարաթյանի ականջին. «Ամենքը կաշառված են»:

Այնինչ Մարաքյանը, դառնալով իրան ներս բերող վերակացվին, ավելացրեց:

Շնորհակալ եղեք պարոն Դիմաքսյանից, որ մի ապտակով միայն ազատվեցիք, թե չէ ձեր ոսկորները ջարդուփշուր պետք է անեինք...

Դո՛ւրս տարեք Բեհեղգբուղի զավակին, գոչեց նախագահը համբերությունը հատած: Վերակացուն հանդուգն աշակերտին դուրս մղեց: Ժողովականները շփոթված նայում էին միմյանց:

Վեքիլյանը մինչև դռները աչքերով ուղեկցեց աշակերտին: Նա վախենում էր, մի գուցե Մարաքյանը գրպանում մի բան ունի և իսկույն կարձակի նրա գլխին: Հետո նա լուսամուտին նայեց և տեղը փոխեց. չէ՞ որ ապստամբը կարող էր դրսից քարեր արձակել:

Պարոն քարտուղար, «ձեր ոսկորները ջարդուփշուր կանեինք» բառերը չմոռանաք: Այժմ, գերամեծար տյարք, կարծեմ այսօրվա արտաքո կարգի նիստը պետք է ավարտված համարել:

Դիմաքսյանը նստած էր դեռ լուռ, ոչինչ չէր ասում: Նա գլուխը հպարտ պահած՝ հեգնորեն ժպտում էր և արհամարհական հայացք ձգում յուր նախկին ընկերակիցների վրա:

Բարաթյանը, որ ամոթահար էր եղել, մտածում էր ինչպես մի կերպ դուրս գա անհարմար դրությունից:

Սրբազա՛ն հայր, արտասանեց նա, որքան կարող էր յուր դեմքին տխուր լրջություն տալով, նախքան ժողովը արձակելը, պետք է հարգելի տեսչին խնդրել, որ ներկա թյուրիմացությունը բացատրե: Այո՛, ես կարծում եմ, որ այս

բոլորը թյուրիմացություն է, ուրիշ ոչինչ: Մեր հոգեկան տրամադրությանը և մեր բարի նպատակին անտեղյակ մարդը կարող է կարծել, որ այստեղ մենք մի տեսակ դատավորներ ենք, իսկ մեծապատիվ պարոն Դիմաքսյանը մեղադրյալ: Այնինչ՝ ոչ դատաստան կա և ոչ քննություն: Մեր բոլորի ցանկությունը մի բան է. վերացնել մեր ազգային թանկագին հիմնարկությունից մի անգամ ընդմիշտ բոլոր անհաճո երկպառակությունները: Ես համոզված եմ, որ մեր մեծապատիվ պարոն տեսուչը մեզանից ավելի է փափագում, որ այս հիմնարկությունը ազատ լինի տխուր անցքերից: Ուրեմն, խնդրենք հարգելի պարոն Դիմաքսյանին, որ նա մեզ մի ելք ցույց տա:

Այդ միջոցին Դիմաքսյանը ոտքի էր կանգնել: Նրա աչքերի մեջ փայլում էր կատաղությունը կծու հեգնության հետ: Նրա երեսի բոլոր մկանունքները դողում էին:

Ամենքը նայեցին նրա կողմը: Վեքիլյանը ինչ-որ շշնջաց նախագահի ականջին: Նախագահը նայեց Բարաթյանի երեսին, և նրանք հայացքներով խոսեցին միմյանց հետ:

Խնդիրն այն էր, որ ամենքը անախորժ դրության մեջ էին, ամենքը զգում էին մի տեսակ ամոթ Դիմաքսյանից և չգիտեին, ինչպես վերջ տալ տեսարանին:

Այնինչ Դիմաքսյանը, խորին արհամարհանքով լսելով Բարաթյանի ասածները, քանի մի վայրկյան լուռ նայեց ամբողջ ժողովին և ապա զորեղ և խրոխտ ձայնով արտասանեց.

Ողորմելինե՛ր:

Այս մի հատիկ բառը, արձակված վրդովված և աներկյուղ կրծքից, ցնցեց ամենքին, կաշկանդեց բոլորի ուշքը: Մեղադրվածը վայրկենաբար նրանց աչքում փոխվեց մի զորավոր տիտանի, որ ինչպես մարմնացած վրիժառություն կանգնել էր նրանց գլխին, աչքերից կայծեր ցայտեցնելով:

Ողորմելիներ, կրկնեց նա, ի՞նչ էիք կամենում. պատժե՞լ ինձ, թե՞ պաշտպանել դպրոցը: Արդյոք, ի՞նչ մի չար վտանգից կամ ո՞ւմ դեմ էիք ուզում պաշտպանել մի

խումբ տկար պատանիների՞: Ի՞նչ է նրանց մեղքը, միթե այն, որ չե՞ն դիմանում դպրոցում տիրող բռնություններին, վրդովվո՞ւմ են ընկերական զրպարտությունների, քսության և լրտեսության դեմ: Եթե դա է նրանց մեղքը, այսօրվա նիստը մի անջնջելի արատ կմնա թե՛ հոգաբարձության և թե՛ ուսուցչական այս խմբի վրա: Ինձանից պահանջում են, որ ես խոսեմ: Ես գիտեմ այդ առաջարկությունը ինչ զգացմունքներից է թելադրվում: Քողը շատ թափանցիկ է, և նրա տակից երևում է սուտ քաղաքագիտության պատկերը: Կամենում եք, որ ես, ինչպես մեղադրված, պաշտպանե՞մ ինքս ինձ: Երբեք իմ հակառակորդները այդ պատվին չեն արժանանալ: Կարծում եք, ես ինձ վիրավորվա՞ծ եմ համարում: Քավ լիցի: Իմ հակառակորդները պարզ տեսնում են, որ իրանց նետը նպատակին չհասավ: Մի քանի անչափահաս, անփորձ, անպաշտպան պատանիներ նրանց ստիպեցին ամաչել, կարմրել: Օհ՛, որքան նրանք այս րոպեիս խղճալի են նույնիսկ իրանց աչքում...

Նախագահը զանգահարելով, ճառախոսին «կարգի» հրավիրեց: Դիմաքսյանը թաշկինակով սրբեց ճակատի քրտինքը և, հպարտությամբ նայելով ժողովին, շարունակեց.

Այսպես, ուրեմն, իմ հակառակորդները իրանք իրանց պատասխանը ստացան: Նրանք տեսան, որ ոչ մի մեքենայություն ինձ չի կարող արատավորել, միայն կարող է կորստի ենթարկել մի ամբողջ հիմնարկություն: Բայց ի՛նչ փույթ նրանց դպրոցի վիճակը, նրանց միակ նպատակն է ինձ հաղթված և ստորացած տեսնել... ես չեմ կամենում ավելի խոսել: Սակայն ներեցե՛ք, այսօրվա եղելությունը ես վարագույրի հետևում չեմ թողնիլ: Ասպարեզ կհանեմ այն յուր բոլոր մանրամասնություններով: Կարծում եք, վրեժխնդիր լինելո՞ւ համար: Ոչ: Ես այդ կանեմ, որպեսզի մեր միամիտ հասարակությունը ճանաչի այն մարդկանց, որոնց յուր գործերի ղեկավար է ընտրում, որոնց ձայնին ականջ է դնում և որոնց մտքերին շատ անգամ ծափահարում է: Գալով իմ պաշտոնին, ինձ շատ լավ հայտնի է իմ հակառակորդների նպատակը: Նրանք փափագում են, որ ես կամավոր կերպով հեռանամ կռվի ասպարեզից, որպեսզի հետևիցս զվարճանան, ծիծաղեն: Բայց հայտնում եմ այդ պարոններին. ես իմ ազատ կամքով երբեք չեմ հեռանալ իմ պաշտոնից, մինչև հոգաբարձությունը ինքը ինձ չասի, «հեռացիր, որովհետև դու վնասակար ես մեզ համար»:

Արտասանելով այս խոսքերը, նա մի անգամ էլ արհամարհանքով և զզվանքով նայեց յուր նախկին ընկերների երեսին: Հետո ծանր, հպարտ և հանդարտ քայլերով, միայն սաստիկ գունատված, նա դուրս եկավ դահլիճից:

Նույն վայրկյանին գերմանական մանկավարժ Ինյաթյանի դեմքի վրա փայլեց մի ուրախ ժպիտ:

XII

Չնայելով Դիմաքսյանի սպառնալիքին, հետևյալ օրը հոգաբարձությունը առանձին նիստում վճռեց նրան թողնել յուր պաշտոնում մինչև պայմանավորված ժամանակի լրանալը, այսինքն մի տարի: Այսպիսով նա կամեցավ մեղմացնել տեսչի սիրտը, որ սա եղելությունը հրապարակ չհանի: Բայց մի շաբաթ անցած դուրս եկավ Դիմաքսյանի մերկացնող գրությունը վեց աշակերտների դպրոցից արձակելու մասին:

Հոգաբարձությունը պատասխանեց նրան սառն պաշտոնական ձևով: Երևում էր, նա աշխատում էր իրողությունը քողարկել: Փաստեր չէր բերում, հակառակորդի ասածը հերքում էր խոսքերով:

Բայց ասպարեզ եկավ Վեքիլյանը և կռիվը այլ կերպարանք ստացավ: Դիմաքսյանն այժմ բոլորովին ընտելացել էր անձնական հարվածներին: Հակառակորդների հարձակումները նրան չէին վշտացնում, այլ գրգռում էին, նրա բորբոքված սրտի մեջ ավելացնելով կիզանուտ հեղուկը: Ամեն կերպ աշխատում էին նրան ցույց տալ իբրև մի վնասակար, անաստված, կործանիչ մարդ, որից մեծ վտանգ է սպառնում հասարակությանը:

Խնդիրը միայն դպրոցի մասին չէր: Մասնավորից սկսելով, Դիմաքսյանն այժմ հարվածում էր հասարակական ընդհանուր ախտերը: Առանձին ախորժակով և կատաղությամբ նա մերկացնում էր կրթված դասի սխալ և վնասակար ուղղությունը, միշտ իբրև օրինակ աչքի առաջ ունենալով Բարաթյանին և Վեքիլյանին: Այժմ նրա կռիվը հասարակության դեմ էր:

Այսպես անցան ամիսներ, անցան ամբողջ աշունն ու ձմեռը: Վերջապես, հասավ գարունը և հարցաքննություններից հետո Դիմաքսյանն արձակվեց պաշտոնից: Նրա տեղը նշանակվեց Ինյաթյանը:

Նույն միջոցին Դիմաքսյանը դարձյալ հեռագիր ստացավ, թե հայրը մահամերձ հիվանդ է:

Նա շտապվեց հայրենիք և այս անգամ ծերունուն մեռած գտավ: Քույրերը հանգուցյալի թաղումը մի քանի օրով հետաձգել էին, սպասելով իրանց եղբոր գալստյանը:

Երեք օր տևեց սգավոր հանդեսը: Առավոտ երեկո քաղաքացիները խումբ-խումբ գալիս էին՝ իրանց ցավակցությունն Արսենին հայտնելու: Վերջապես, ընդհատվեցին ձանձրալի այցելությունները, և որբացած որդին ժամանակ ունեցավ հետաքրքրվելու հոր գործերով:

Հանգուցյալը կտակ չէր թողել:

Նա մինչև հետին շունչը չէր հավատացել մահվանը և մինչև անգամ կռվել էր նրա մասին խոսողների հետ:

Աղջկերանց հետ նա տեսակցության էր ունեցել մեռնելու նախընթաց օրը: Ոչ մի խոսք չէր ասել նրանց յուր կարողության մասին: Մեռնելուց մի ժամ առաջ հիշել էր Արսենին, մեղադրելով նրան, թե մոռացել է ծերունի հորը: Նույն ժամին նա վոնդել էր բժշկին, բարկանալով, որ նրա դեղերը չեն ազդում: Հոգևարքի ժամանակ կռվել էր մահվան դեմ, հայհոյել էր նրան ամեն տեսակ խոսքերով: Քահանան կանչվել էր վերջին րոպեին, սուրբ հաղորդությունը գդալով էին ածել հանգուցյալի կոկորդը:

Այս բոլորը արտասուքն աչքերին պատմեց նրա ավագ քույրը, կրկնելով...

«Համառ մարդ էր, համառ էլ մեռավ»:

Երկու շաբաթվա ընթացքում Դիմաքսյանի համար պարզվեց գործերի դրությունը: Երկաթյա սնդուկի մեջ, բացի հին մուրհակներից և մի քանի կապ

պայմանագրերից, նա ոչինչ չգտավ: Պարզ էր, որ հավատարիմ Սարիբեկի խոնավ ձեռը այնտեղ էլ մտել էր: Իսկ թե հանգուցյալը զուտ փող ունեցել էր, այդ երևաց նրա մի փոքրիկ ձեռատետրից, որ կառավարիչը մոռացել էր թաքցնել: Այնտեղ նշանակված էին ոճրացած եկամուտները և ծախսերը:

Անհետացել էին և այն բոլոր ոսկեղեններն ու ակնեղենները, որ մի ժամանակ Արսենի մոր զարդերն էին կազմում և որոնց ծերունին խնամքով պահում էր ինչպես մի սրբություն:

Կողոպուտը հաստատելու և հանցավորին պատմելու համար պետք էր դիմել դատաստանին: Տեղական փաստաբաններից մեկն առաջարկեց յուր ծառայությունը: Դիմաքսյանը մերժեց: Նա զզվում էր դատաստանական գործերից և չէր ուզում ժամանակը զոհել անվերջ վեճերի: Բացի դրանից, նա խնայում էր Սարիբեկի ութ հոգուց բաղկացած ընտանիքին: Նա անմիջապես վռնդեց կողոպտչին, փորձեց ինքն անձամբ կառավարել գործերը: Սակայն քիչ ժամանակ անցած տեսավ յուր տնտեսական ապիկարությունը՝ նա՛, որ թեորիայով միայն գիտեր ինչ ասել է տնտեսություն:

Նա վճռեց սահմանափակել գործերը: Ժռանգությունը օրինական կերպով հաստատելուց հետո, կալվածների մի մասը, նվիրեց քույրերին: Այդպիսով նա ազատեց նրանց մի մշտական նախատինքից, որ խեղճ կանայք կրում էին ամուսիններից իրանց ժլատ հոր պատճառով:

Նրա եռանդուն միտքն անգործ չմնաց հայրենի քաղաքում: Նա ուսումնասիրում էր գավառական կյանքը, հավաքում էր տեղեկություններ ժողովրդի բարոյական վիճակի մասին: Ամեն օր նա շրջապատված էր տեղական երիտասարդներով, որոնք արդեն իրագործել էին նրա առաջին գալստյան ժամանակ առաջարկած ընկերությունը: Նրա նոր կոիվը մեծ հետաքրքրություն էր շարժել: Նրա կողմնակիցներն այժմ որոշ և ավելի ընդարձակ շրջան էին կազմում: Բայց շատացել էր և հակառակորդների թիվը:

Պատահել էին մի քանի խոշոր ընդհարումներ երկու հակառակորդ խմբերի մեջ: Նկատել էր, որ ինչ որ կատարվում է Թիֆլիսում, նույնն անդրադառնում է և փոքրիկ քաղաքների կյանքի վրա: Այստեղ ևս տիրում էին նույն

երկպառակությունները բոլոր հասարակական խնդիրների մասին: Տարբերությունը միայն մեկ էր. կյանքը ավելի սահմանափակ լինելով, փոխադարձ խռովություններին է՛լ ավելի նեղ հոգի էր ներշնչում: Մարդիկ ավելի աններողամիտ էին, ավելի կրքոտ և ավելի հիշաչար: Շատ անգամ վեճերը հասնում էին սարսափելի ծայրահեղության: Հակառակորդները պատրաստ էին մտքի պատերազմը փոխել բռունցքի կռվի և միմյանց գանգը ջարդել և դուրս թափել այնտեղից այն ուղեղը, որ հանդգնում էր ուրիշ կերպ դատել քան թե իրանցը:

Այս հանգամանքը Դիմաքսյանի համար հետաքրքրական էր յուր բնորոշ կողմերով: Նա տեսնում էր, որ մարդը որքան քիչ է կրթված, այնքան քիչ է համբերող, այնքան ավելի կատաղի է, սակայն, միևնույն ժամանակ, այնքան ավելի պարզ և անկեղծ է յուր համակրության և հակակրության մեջ: Բայց ամենահետաքրքրականը նրա համար ուրիշ բան էր: Նա նկատում էր հասարակության մեջ մի նոր երևույթ, այն է՝ կռիվ երկու սերունդների մեջ հնի և նորի: Դա հայրերի և զավակների կռիվ էր: Մի կռիվ, որ հայ կյանքի մեջ առաջին անգամն էր երևան գալիս այնպիսի որոշ կերպով:

Եվ երբեմն յուր առանձնության մեջ նա մտածում էր, արդյոք ի՞նչ հետևանք կունենա այդ բոլորը: Նրա առջև պատկերանում էր կյանքի մի բարոյական քաոս, ուր առաջին հայացքով անհնարին էր մի բան որոշել: Որդին դիմադրում է հորը, աշակերտն ապստամբվում է ուսուցչի դեմ, ամեն տեղ թարմը, նորաբույսը և կենդանին բողոքում են և դիմադրում են հնին ու թմրածին:

Արդյոք այդպիսի ճյուղերը չե՞ն բաժանվիլ արմատից, և դարավոր բունը հանկարծ չի՞ չորանալ:

Այս միտքը վայրկենաբար սարսափեցնում էր նրան: Նա սկսում էր վախենալ ծագած պատերազմից:

Բայց անցողիկ երկյուղը տեղի էր տալիս վարդագույն հույսերին: Երևակայությունն առաջնորդում էր նրան դեպի մի բարվոք ապագա: Այստեղ նրա մեջ երևան էր գալիս մի տեսակ օպտիմիստ և իդեալիստ Մսերյան, սակայն այլ գույներով: Նա լիովին իրագործված չէր նախագուշակում մարդկության

լավագույն մասի իդեալը: Նրա խելքը դատում էր համեմատական մեթոդով: Նա տեսնում էր մի անընդհատ, հարատև պատերազմ դարերի ընթացքում, սերնդից սերունդ և սերունդների մեջ: Երբեք չի դադարել հնի և նորի այդ պատերազմը, կփոխվեն միայն մարդիկ, կփոխվեն նրանց զենքերը, փոխադարձ դիմադրության եղանակը և միջոցները: Բայց միշտ հաջորդ սերունդը յուր կյանքի քաղաքակիրթ կողմերով կգերազանցի նախընթաց սերնդից... և այսպես անվերջ...

Կրկին նա ոգևորվում էր, կրկին սիրտը լցվում էր քարոզելու, գործելու և անընդհատ մաքառելու անհուն եռանդով և ձգտումներով:

Ձմեռվա վերջին նա կամեցավ հեռանալ հայրենի քաղաքից: Նրան զուտ փող էր հարկավոր ապրելու և գործելու համար: Նա ծախեց հայրական կալվածներից մի փոքրիկը: մյուսների կառավարությունը հանձնեց Հաբիգյան ազգանունով մի երիտասարդի: Դա նրա նախկին ընկերներից մեկն էր, որ մասնագիտաբար ուսումնասիրել էր գյուղատնտեսությունը: Նա լիազոր իրավունք տվեց Հաբիգյանին կառավարել յուր կալվածներն ինչպես կամենում է, եկամտից մի որոշ տոկոսիք հատկացնելով նրան:

Նա վերադարձավ Թիֆլիս: Այստեղ նրա բացակայության ժամանակ կողմնակիցները շարունակել էին ընդդիմադրել հակառակորդներին կյանքի զանազան խնդիրներում: Բայց կռիվն առաջվա եռանդով չէր կատարվել:

Մսերյանը բարկացած պատմեց, թե երևան են եկել անկոչ պաշտպաններ, որոնք իրանց տգիտության շնորհիվ գործին ավելի վնասում են, քան օգնում:

Ոչինչ, ասում էր նա, ինձ համար այնքան ատելի և ոչինչ այնքան վտանգավոր չէ, որքան տխմարությունն իմաստունի դիմակով: Ամենաբարձր գաղափարը տգետի շրթունքներից կարող է ծաղրելի հնչել: Ջորեղ գործի համար զորավոր զենք է հարկավոր: Ջգուշացիր անմիտներից, մի՛ հավատալ անկիրթների խելքին և ոչ էլ անկեղծությանը: Բարոյական անխախտ սկզբունքները ձեռք են բերվում միայն մտքի հարատև գործունեությամբ: Տգետի օրենքը նախապաշարմունքներն են և արտաքին ուժը: Լուսամիտ մարդու դեկավարը միմիայն յուր խելքն է և սիրտը: Մի հաստատամիտ, կրթված, զարգացած, մտածող բարեկամիդ գերադասիր հարյուրավոր թերհաս անկիրթ պաշտպաններից:

Այդ կարճ միջոցում իդեալիստը բավական ծերացել էր: Նրա մազերը ավելի ճերմակել էին, երեսի խորշերը շատացել: Նա հաղորդեց, թե առաջիկա քաղաքային ընտրություններին կողմնակիցները մտադիր են Դիմաքսյանին առաջարկել, որ յուր քվետուփը գնի: Ցուցակ է կազմված և նրա անունն էլ մտցրած է ընտրելի իրավասուների շարքը: Դիմաքսյանը պատասխանեց, թե ցանկություն չունե քաղաքային գործերի մեջ խառնվել, թեև առաջ ձգտում էր:

Ես էլ խորհուրդ չէի տալ, ասաց Մսերյանը, լավ է մի գործի ծառայել, և լավ ծառայել, քան թե ուժերը ցրել մի խառնիճաղանջ հասարակության մեջ: Իդեալիստը, ի միջի այլոց, հայտնեց, թե օրիորդ Կարինյանը արտասահմանից վերադարձել է:

Այո՞: Ինչպե՞ս է, փոխվե՞լ է, հարցրեց Դիմաքսյանը:

Շա՛տ:

Մի՞թե:

Ուզում եմ ասել ավելի լավացել է, թե՛ արտաքուստ և թե՛ հոգով ու սրտով: Այո՛, նա այժմ ինձ ավելի է դուր գալիս:

Վերջին դարձվածը Մսերյանը արտասանեց ձայնը ցածրացնելով, կարծես, ինքն յուր համար: Հանկարծ նա ընդհատեց խոսքը օրիորդի մասին և դարձավ ուրիշ բաների:

Դիմաքսյանը նայեց նրա երեսին և նրա աչքերի մեջ նկատեց մի անսովոր բան...